

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

613(023)

U-72

1925p.

613/023  
Ա-70

20 JUL 2010

Պոլիտարմեր բոլոր յերկրների միացի'ք

Հ. Ս. Խ. Հ.

ԸՆԴՈՒՅՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԹԱԿԱՆ ԿՈՄՍՈՒՐԻՍԻ  
ՀԵՆՐԵՄԵՏՆԵՐ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱՌԻՅՈՒ Ն 4

ՍԱՆ.-ՀԱՄԱՃԱՐ. ԲԱԺՆԻ ՍԱՆ.-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ՅԵ/ԲԱԺԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ  
ԵՐԵՎԱՆ 1925

613  
K-72

Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք:

Հ. Ս. Խ. Հ.

ԱՌՈՂՋԱԳՆՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԿԵԿԱՆ ԿՈՄՄՍՈՒՆԻՏԻ  
ՀԵՆՐԵՄԱՏՅԵԼԻ ԳՐԱԿԱՐԱՆԻ ԳՐԱՌԻՏԻ № 4

ՍԱՆ.-ՀԱՄԱՃԱՐ. ԲԱԺԻՒ ՍԱՆ.-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ՅԵ/ԲԱԺԻՆ

# ԱՌՈՂՋԱԳՆՀՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՏԵՏՐ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԱՌԺՈՂԿՈՍՍԻՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1925

14 FEB 2013

ՈՂ

Առողջութեան համար շատ հարկաւոր է մաքուր և քարս ողբ, ուստի անհրաժեշտ է ամեն ոք վաղ պակաս 3 ժամ անցկացնել բաց ողում: Իսկ փակ շենքերը, բնակէջի սենյակները, դասարաններն, արհեստանոցներն և այլն պետք է լատ կարելուն շուտ-շուտ ողափոխել:


Տարվա տաք յեղանակներին փակ շենքերի լուսամուտները պետք է միշտ բաց պահել: Չմեռը սենյակները պետք է ողափոխել, բաց անելով պատուհաններն որեկան 2—3 անգամ, իսկ յեթե կան ողանցքներ, պետք է միշտ բաց պահել նրանց ձմեռը, բացի քամի և ցուրտ որերից:

Ննջարանները պետք է ողափոխել քննուց առաջ: Ողբ թոքերով անցնում է արյանը, վորը տանում է բոլոր գործարաններին: Մարդու գործարաններն առանց ողի գործել չեն կարող և մարդն առանց ողի իսկույն չնշահեղձ կը լինի:

Տաք սենյակից ցուրտը դուրս գալիս, պետք է շնչել քթով և բերանը պահել փակ (չխոսել, չերգել), մանափանդ, յեթե դուրս գալուց առաջ շատ ես խոսել, յերգել, կամ թե՛ տաք թե՛ ևս խմել:

Ողի հեռ ներսնշնամ փոշին շատ վատ է ազդում թոքերի վրա, ուստի չպետք է մնալ փոշոտ սենյակում և պետք է հոգ տանել, վոր սենյակում փոշի չլինի:

Շենքերից, հասարակական արհեստանոցներից, հաճախութեանից և պահեստներից փոշին հեռացնելու համար գործադրվում են փոշեծծան գործիքներ, հատակին քրտում են փոշի ծծող յուղեր, որինակ, նավթ և այլն: Յուրաքանչյուր կազմակերպութեան պետք է հոգ տանի իր շենքը փոշուց ազատ պահելու մասին: Իսկ անձնակազմ



35914-62

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԳԱՐԱՆ

Գրատ. 218բ. Գատ. № 646 Տիր. 15.000

կյանքում յուրաքանչյուր մարդ պետք է հետևի, փոր հա-  
զուտան և կոչիկները մաքուր լինեն, պետք է մաքրել  
հագուստն և կոչիկները փոշուց վոչ սենյակում, այլ  
դրսում, պետք մաքրել բնակարանի հատակը թաց շո-  
րով, թրջած ավելով, պետք է սենյակի իրերի վրայի փո-  
շին սրբել թաց շորով և այլն:

**ԱՐԵՎ ՅԵՎ ԼՈՒՅՍ**

Մարդու առողջուլթյան համար շատ անհրաժեշտ են  
արևն ու լույսը: Առանց լույսի, առանց արևի մինչև ան-  
գամ վոչ մի բույս չի աճի. նույնպես և վոչ մի կենդանի  
չի կարող ապրել առանց լույսի և առանց արևի:

Արեգակի լույսը մաքրացնում է սենյակի ուր, արե-  
գակի ճառագայթները սպանում են ողի մեջ, փոշու մեջ  
և զանազան առարկաների վրա գտնվող վնասակար և վա-  
րակիչ հիվանդությունների թույլը՝ վարակը:

Արեգակի ճառագայթներն իրենց տված տաքու-  
թյամբ շորացնում են և տաքացնում են բնակարանը:

Չպետք է մոռանալ, վոր այն բնակարանը, վորտեղ  
արև չկա, հիվանդություն շատ է լինում և այնտեղ բը-  
ժիշկը շուտ-շուտ է գնում:

**ՄԱՇԿ**

Մարդու մաշկը պաշտպանում է մարմինը դրսի աչ-  
խարհի վատ ազդեցություններից: Մաշկն ունի ծակոտի-  
ներ, վորոնց միջոցով մարմնից հեռանում են վնասակար  
նյութերը: Այդ նյութերը հեռանում են կազմվածքից  
քրտինքի և գոլորչու միջոցով: Յեթե մաշկը կեղտոտ է,  
նրա ծակոտիները փակվում են և այդ վնասակար նյու-  
թերը մնում են կազմվածքի մեջ ու հիվանդացնում մար-  
դուն:

Յուրաքանչյուր մարդ պետք է աշխատի մաքուր պա-  
հել մաշկը, վոր ինքն առողջ լինի և աշխատունակ:

Մաշկի մաքրության համար պետք է ամեն որ առա-  
վոտները լվանալ սապոնով յերեսը, պարանոցը, ձեռնե-  
րը, մինչև անգամ և մարմինը մինչև գոտին: Պետք է չա-  
քաթական մի անգամ բաղնիք գնալ: Բաղնիքում չպետք է  
լողանալ շատ տաք ջրով: Լվացվելուց հետո պետք է լավ  
չորացնել մարմինը: Բաղնիքից հետո, ցուրտ յեղանակին  
պետք է տաք հագնվել և գնալ տուն:

Տաք յեղանակին պետք է ամեն որ լողանալ, կամ գո-  
նե սառը ջրով թրջած շորով չփել մամինը:

Լողանալու լավ ժամը՝ առավոտյան կամ յերեկո-  
յան է:

Կեսորին, ամենաչոզ ժամանակը լողանալ չի կարելի:  
Փսկ ուտելուց հետո կարելի յե լողանալ միայն 1 ժամից  
հետո: Սառը ջուրը մտնելիս, պետք է մտնել արագ, ջրի  
մեջ պետք է անել շարժումներ: Առաջին անգամ լողանա-  
լիս, ջրի մեջ պետք է մնալ 2—3 րոպե, իսկ հետո կարելի  
յե աստիճանաբար յերկարացնել և հասցնել 15 րոպեի:  
Պետք է իսկույն դուրս գալ ջրից, յեթե դող ես զգում:  
Ով սովոր է լողանալուն, կարող է լողանալ սառը ջրի  
մեջ և ցուրտ յեղանակին: Սառը ջրում լողանալուց հետո  
պետք է աշխատել տաքանալ:

Շատ ոգտակար է լողանալու հետ միասին բնգունել  
և արևային վաննաներ, այսինքն՝ պառկել արևի տակ  
բաց մարմնով, բացց գլուխը ծածկած: Չպետք է լողա-  
նալ հիվանդության դեպքում (գլխացավ, հոգ հարբուխ,  
լուծ և այլն):

**ԱԶՔ**

Մարդու ամենաթանկագին գործարանն աչքն է:  
Կույր մարդն ամենազթրախտ մարդն է աշխարհի մեջ,  
ուստի յուրաքանչյուր մարդ պետք է լավ յնամք տանի  
աչքերի մասին:

Մաքուր պահել աչքերը, կեղտոտ ձեռքերով՝ չդիպչել աչքերին, շորքել, յերբ մտեղ, չոփ կամ փոշուկ երնկած մեջը:

Յեթե աշխատանքի տեղում՝ վնասակար փոշի, մետաղի կտորներ կամ գոգեր կան, պետք է պաշտպանել աչքերը համապատասխան ակնոցներով:

Աչքի հիվանդության դեպքում կամ նրա մեջ մի վարակիչ տարր մարմին բնկած դեպքում պետք է դիմել բժշկի, խորհրդին և առանց նրա խորհրդի փոշին չչանել:

Աչքի հիվանդությունների մեջ ամենատարածվածն են սովորական թարախային աչքացավը և տրախոման, վարակիչ յերկուսն էլ վարակիչ են և պահանջում են իրենց հատուկ բժշկությունը: Բժշկության համար անհրաժեշտ է դիմել մասնագետ բժիշկների և վոչ անային՝ հեքիմների կամ անային միջոցների, վորոնցից աչքը շատ հեշտությամբ կարող է կուրանալ:

Կամ հիշիր, վոր յեթե աչքդ փչացավ, նորը չես կարող նարել:

**ԱՏԱՄՆԵՐ ՅԵՎ ԲԵՐԱՆ**

Ատամները հարկավոր են մարդուն մարտոդության և սննդատու թյան համար. նրանք ծամում են կերակուրն և նպաստում են մարտոդությանը: Ատամ չունեցողը չի կարող սնունդ ստանալ, ապա ուրեմն առողջութան և ուժի համար անհրաժեշտ է ունենալ լավ ատամներ: Ամենոր—լավ և քնկույց ստաջ—պետք է սրբել ատամները փոշի—յով և ատամի խոզանակով, վորը պետք է վոչ շատ փափուկ լինի և վոչ էլ շատ կոշտ: Ամենալավ փոշին ատամի համար—մաքրած կավիճն է: Յերբեք չպետք է գործածել ուրիշի խոզանակ: Պետք է մաքրել ատամները թե՛ դրսից և թե՛ ներսից: Վերևի ատամները պետք է մաքրել վերից—վար, իսկ ստորինը՝ վարից վեր: Ատամները մաքրելուց հետո անհրաժեշտ է վողողել բերանը մաքուր ջրով: Ամեն

անգամ ուտելուց հետո պետք է վողողել բերանը: Ատամների փչանալը սկսվում է ատամի վերին մասի, եմալ կոշվող շերտի վնասումից: Յեթե նույնիսկ շատ քիչ է վնասված այդ եմալն, ատամը սկսում է փշրվել և փտել: Այդ տեսակ ատամը պետք է լցնել տալ, հակառակ դեպքում ատամը կը փչանա մինչև արմատն և հիվանդությունը կանցնի հարևան ատամներին ևս: Պետք է զգուշանալ եմալի վնասումից, դրա համար չպետք է ֆշվորել ատամների արանքը քորոցով, մազկալով, պոպպատե գրիչներով և այլն:

Իբրև ատամփորիչ պետք է գործել վետուր կամ սըրած լուցկի: Չպետք է կտրել ատամներով ընկույզ, կորիզ, շաքար և այլն: Անհրաժեշտ է չուտ—չուտ դիմել, գոնե տարեկան 1—2 անգամ, ատամնարուժին, վոր հարկավոր միջոցներ ժամանակին ձեռք առնի, փչացած ատամները բժշկելու համար: Բացի այդ՝ յեթե մի քանի ատամներ բացակայում են, պետք է դնել տալ արհեստական ատամներ, վորպեսզի սննդատու թյունը չխանդարվի:

**ԲԻԹ ՅԵՎ ՇՆՉՈՂՈՒԹՅՈՒՆ**

Պետք է սովորել թե՛ ցերեկը և թե՛ գիշերը շնչել ֆրքով և բերանը խփած: Դրա համար քթանցքները պետք է միշտ ազատ լինեն: Բթով շնչելիս՝ սառն ոգը տաքանում է քթի մեջ, բացի այդ՝ քթի մեջ կանգ են առնում ոգի մեջ գտնվող փոշու վնասակար մասնիկներն և այդպիսով քթը պաշտպանում է թռքերը պանագան հիվանդություններից:

Ուրեմն պետք է մաքուր պահել ֆիքը, սրբելով չուտ—չուտ թաշկինակով և վոչ մատներով կամ կոշտ իրերով:

Յեթե քթով շնչելուն խանգարում է հարբուխը կամ մի այլ հիվանդություն, պետք է իսկույն դիմել բժշկին:

Կան ջթի հիվանդություններ, վորոնք առավելապես  
յերեխաների վրա յեն լինում, ազդում են յերեխաների  
վոչ միայն շնչառության վրա, այլ և նրանց ընդհանուր  
զարգացման և նրանց ընդունակությունների վրա: Այս-  
պիսի դեպքերում անհրաժեշտ է առանց հետաձգելու դի-  
մել բժշկին:

**ԱԿԱՆՁՆԵՐ**

Ականջով մարդ լսում է: Իսկ լավ լսելու համար հար-  
կավոր է նրան մաքուր պահել, բայց ականջը մաքրելու  
համար չպետք է նրա մեջ մտցնել զանազան կոշտ իրեր,  
մազկալ, լուցկի և այլն: Պետք է հիշել, վոր կարելի չե  
դրանցով պատռել ականջի թմրկաթաղանթը:

Ականջի խեցին պետք է լվանալ ամեն օր և լավ չորա-  
ցնել: Ականջի կեղտը հեռացնելու համար ականջի անցքը  
կարելի չե մաքրել միայն մաքուր բամբակով:

Յեթե ականջի անցքի մեջ մի վորևէ ոտար մարմին է  
բնկել, որինակ, յորի, վոսպ ցորենի հատիկ, կորիզ և  
այլն, պետք է խկույն դիմել բժշկին:

Յեթե մի վորևէ միջատ է մտել ականջի անցքը,  
պետք է 5 կաթիլ թեթե տաքացրած (գու) ձեթ (պասուց  
յուղ) կաթացնել մեջը: յեթե դրանից հետո միջատը  
դուրս չգա, պետք է դիմել բժշկին:

Ականջի անցքից թարախ հոսելու դեպքում, պետք է  
դիմել բժշկին:

Լողանալիս պետք է զգույշ լինել, վոր ջուր չլցվի ա-  
կանջի անցքը: Ուժեղ շնչյունները վնաս են ականջի հա-  
մար: Ուժեղ շնչյունի դեպքում պետք է բաց պահել բե-  
րանը: Ուժեղ ականջին շատ վնաս է, վորովհետև կարող է  
պատուվել թմրկաթաղանթը:

**ՈՒՏԵԼԻՔ ՅԵՎ ԽՄԵԼԻՔ**

Ուտելիքն և խմելիքը հարկավոր են մարդուն ապրե-  
լու և աշխատելու համար, հենց այնպես, ինչպես վտակ-  
լիքը շոգեկառքի, ավտոյի համար:

Սննդամթերքները պետք է լինեն թարմ և մաքուր.  
նրանք շատ հեշտությամբ կարող են կեղտավել. դրա  
համար պետք է պաշտպանել մթերքները փոշուց և ճան-  
ճերից. պետք է ուտել մաքուր ամանից, գդալով, դանա-  
կով և պատառաքաղով և վոչ մասներով:

Պետք է յուրաքանչյուր մարդ ունենա իր պնակն, իր  
գդալն, իր դանակը, պատառաքաղն և իր սրբիչը. այս  
բոլորի վրա յեյ պետք է նշանակել, վոր ուրիշների նույն  
տեսակի իրերի հետ փոխո չնկնեն:

Չի կարելի քույլ տալ, վոր շատ մարդիկ ուտեն մի  
ամանից. այդպիսով տարածվում են մի շարք վարակիչ  
հիվանդություններ, որինակ՝ սիֆիլիս:

Յեթե ստիպված ես ընդհանուրի դավաթից խմելը,  
պետք է ջրով լավ մաքրել դավաթը, մանավանդ նրա կո-  
ղերը, հետո խմել:

Ուտելիս չպետք է շտապել, պետք է լավ ծամել, ու-  
տել վոչ շատ տաք, վոչ էլ շատ սառը կերակուրներ, մա-  
նավանդ չպետք է տաքից հետո խկույն սառը խմել.  
չպետք է ուտել չափից դուրս, չպետք է ուտել հին, մնա-  
ցած և վիչացած կերակուրներ, որինակ թթված. միզոն  
ուտելուց առաջ, մանավանդ փողոցում գնվածը, պետք  
է լավ և մաքուր ջրով լվանալ: Պետք է ուտել թարմ և  
հասած մրգեր, չպետք է կուլ տալ կորիզները:

Խմելու համար պետք է գործածել մաքուր և ալքոյու-  
րի ջուր. պետք է մաքուր և ծածկած պահել ջրամաննե-  
րը:

Յեթե աղբյուրի ջուր չկա, պետք է գետի ջուրը յե-  
ռացնել ու հետո գործածել. մինչև անգամ լվացվելիս էլ

պետք է յեռացրած ջուր գործ ամէլ: Լավ է գետի ջուրն յեռացնելուց առաջ քարով քամել:

Գետի ջրի մեջ կա գանազան հիվանդութիւններն վարակ, փորը սպանվում է և անվնաս դարձնվում յեռացնելուց: Աղբյուրի ջուրն ակարող է վարակել, յեթէ ջրամանք մաքուր չպահել:

**ՔՈՒՆ ՅԵՎ ԱՆԿՈՂԻՆ**

Աշխատող մարդու համար քունը հարկավոր է ուժերի վերականգնման և հանգստի համար. անքնութիւնն և անբավարար քունը մարդուն անաշխատունակ է դարձնում:

Յուրաքանչյուր մարդ պետք է ութ ժամ աշխատի, ութ ժամ հանգստանա և ութ ժամ քնի, մանավանդ պատանեկական հասակում: Լավ է հանդիստ քնելու համար պետք է ննջարանը լինի արևի կողմը և յույտով: Պետք է ննջարանի սփռ շուտ-շուտ փոխել, մինչև լավ ցրտերն ընկնելը պետք է ննջարանի պատուհանները բաց պահել: Պետք է պառկել շուտ. քնելուց առաջ չպետք է շատ ուտել և խմել: Նույնպես վնաս է քնելուց առաջ վիճելը, գրգռիչ բնթերցանութիւնը:

Ընթրիքից հետո մի ժամից շուտ չի կարելի պառկել:

Չարթնելուց հետո պետք է անմիջապես վեր կենալ անկողնուց:

Լավ քնելու համար չպետք է անկողինը շատ փափուկ լինի և չպետք է շատ տաք ծածկվել: Պետք է պահել անկողինը մաքուր: Պետք է փոշն չափնել միջատներին. յու, փոջիլ, փայտփոջիլ անկողնու մեջ չպետք է լինեն: Պետք է շարաթական մեկ անգամ փոխել անկողնու և մարմնի վրայի սպիտակեղենը:

Պետք է շարաթական մեկ անգամ արևին տալ անկողինը՝ փերմակը, ներքնակը, բարձերն և ալյն:

**ՎՈԳԵԼԻՅ ԽՄԻՉՔՆԵՐ ՅԵՎ ԾԽԱՆՈՏ**

Վոգելից խմիչքները (ողի, կոնյակ, գինի և այլն) շատ վատ են ներգործում կազմվածքի վրա, մանավանդ քայքայում են մարդու գլխի ուղեղի նուրբ մասերը: Վոգելից խմիչքները վոչ թէ միայն վնասակար են յերբ ուշ ուշ բայց շատ են խմում, այլ և վնասակար են մշտական գործածելիս, թեկուզ և քիչ չափով: Չպետք է խմել գինի, դարեջուր և ալյն, պետք է համոզել ուրիշներին ևս չգործածել գինի և ալյ խմիչքներ: Պետք է անդամազրկել ողի չգործածող ընկերութիւններին:

Թութուներ պարունակում և ուժեղ թույն-նիկոտին, փորն անցնում է ծխի հետ թոքերին և ստամոքսին, ապա և սրտին և ուղեղին:

Ծխելն վնասում է թոքերն ու սիրտը. զրկում է ախորժակից և սննդից. քայքայում է ուղեղը:

Ով չի ծխում, չպետք է սկսի ծխելը, իսկ ով ծխում է, պետք է աշխատի թողնել այդ վատ սովորութիւնը, կամ գոնե քիչ ծխի և ծխի միայն ուտելուց հետո: Ծխողը թէ իրեն և վնասում է թէ ուրիշներին, ստիպելով նրանց չնչել ծխով լի ող, ուտի սեղնակում չպետք է ծխել:

Չպետք է ծխել գլանակը մինչև վերջը, վերով հետև գլանակի վերջին ճասը շատ նիկոտին և պարունակում:

Միևնույն պատճառով և չպետք է ծխել հանգամ գլանակը:

Ծխելը շատ վատ որինակ է պատանիներին և գեռատիներին համար, փորոնք սկսում են ծխելը նմանվելու ցանկութիւնից:

Ծխազն աջակցում է թութուների արդյունաբերութիւնը, փորը շատ վնասակար է թութուների գործարանի բանվորների համար:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարակիչ են կոչվում այն հիվանդութիւնները, վորոնք անցնում են հիվանդից առողջին: Պէտք է իմանալ, վոր վարակիչ հիվանդութիւններն անցնում են ողի, ջրի, կենսամթերքների, միջատների, հիվանդների գործածած իրերի և հիվանդների հետ շփումն ունեցած առողջ մարդկանց միջոցով:

Վարակիչ հիվանդութիւններ չափ կան, բայց դրանցից ամենավտանգավորներն են՝ պարախտոր, մայրիան, հետադարձ տիֆը, բժաւոր և վորովայնի տիֆը, ծաղիկը, քութեչը, դիֆտերիար, կարմրուկը, կապույտ հագն և այլն: Յերբեմն վարակիչ հիվանդութիւնները տարածվում են միանգամից շատ տեղերում և շատ ու շատ մարդիկ են հիվանդանում և մեռնում. այդ տեսակ վարակիչ հիվանդութիւնը կոչվում է համաճարակային, որինակ՝ խոլերան:

Վարակիչ հիվանդութիւններից պաշտպանվելու համար գործադրում են կանխարգելիչ միջոցներ, վորոնք յերկու տեսակի յեն՝ հասարակական և անձնական:

Մենք այստեղ կը խոսենք միայն անձնական կանխարգելիչ միջոցների մասին:

Ահա նրանք՝

1. Պատվաստել տալ յերեխաների ծաղիկը.
2. Չհաճախել այն տները, վորտեղ վարակիչ հիվանդներ կան.
3. Վարակիչ հիվանդին տեղափոխել հիվանդանոց, յեթե տանը պահելու հնարավորութիւն չկա.
4. Յեթե պատահամբ յեղել էք վարակիչ հիվանդի մոտ, պետք է մաքրել հագուստն և կոշիկները, պետք է լավ լվացվել, լավ կլինի, վոր վերին զգեստը 1-2 ժամ թողնել արևի տակ, իսկ սպիտակեղենը լվանալ տալ.
5. Վորովայնի տիֆից, խոլերայից պաշտպանվելու

համար պետք է չխմել հում ջուր, հում և փչացած կենսամթերքներ չգործածել, պետք է պաշտպանել ուտելիքն ու խմելիքը ճանճերից.

6. Ամեն կասկածելի դեպքում պետք է դիմել բժիշկին:

ՊԱՆԱՐԱԿՏ ՅԵՎ ՄԱՆԱՐԻԱ

Պալարատի (բարակացավի) ամենավտանգավոր տեսակը թոքախտն է, վորը բոլորին էլ հայտնի յե և վորը ահագին կոտորածներ է անում ամեն տարի:

Մեր Հանրապետութիւնների Միութեան մեջ տարեկան կես միլիոնից ավել մարդ է մեռնում թոքախտից:

Թոքախտը տարածված է մյուս յերկրներում և թոքախտն անցնում է ոգի, ջրի, կենսամթերքների, ճանճերի և հիվանդների իրերի միջոցով, մանավանդ հիվանդների չորացած խորխի և թքի միջոցով:

Թոքախտից պաշտպանվելու համար պետք է հետու մնալ փոչուց, պետք է չծխել, պետք է լավ սնունդ և արևոտ բնակարան ունենալ: Մի սենյակում շատ մարդ չպետք է լինի. չափից դուրս աշխատանքը, նույնպես և անքուն գիշերներն ու անկանոն կյանքը նպաստում են թոքախտով հիվանդանալուն:

Հայաստանի ամենատարածված հիվանդութիւններից մեկը մալարիան է, վորն անցնում է հիվանդից առողջին մոծակների միջոցով:

Մալարիան ամենքին հայտնի գողերոցքն է:

Նրանից պաշտպանվելու համար պետք է ապրել ճահիճներից հեռու, պետք է աշխատել, վոր բնակելի տեղի մոտ կանգնած ջրեր, դանդաղ հոսող առուներ չլինեն, վորովհետև մոծակներն այդ տեսակ ջրերի յերեսին են ձու դնում: Պէտք է կոտորել մոծակներին, մանավանդ ձմեռը, յերբ նրանք քնած են սենյակների, գոմերի, մա-

ուանների և փարախների առաստաղների վրա, կամ նրանց մուխ անկյուններում:

Մոծակներն ավելի շատ կծում են գիշերը մարդու քնած ժամանակը, ուստի նրանց կծելուց պաշտպանվելու համար ամառը պետք է քնել բացողում շինված բարձր պաշտպանի վրա (քյաթիլ), կամ պետք է քնել ծածկոցի տակ:

Պետք է հիվանդներն աշխատեն բժշկվելը, վոր չուտ առողջանան և ուրիշների վարակման պատճառ չդառնան, իսկ առողջները պետք է շարաթական մի քանի անգամ խինին ընդունեն, վոր չհիվանդանան:

Հայաստանում տարածված են և ուրիշ վարակիչ հիվանդություններ, վորոնցից պաշտպանվելու համար պետք է գործադրել հետևյալ միջոցները:

ա) Տրախումա.—Անցնում է հիվանդից առողջին հիվանդ աչքի արտադրության միջոցով, ուստի չպետք է ձեռք տալ աչքացավով հիվանդ աչքին, առհասարակ վոչ բժիշկն չպետք է ձեռք տա ուրիշի աչքին: Չպետք է գործածել հիվանդի սրբիչը, թաշկինակը, բարձն և այլն: Հիվանդի մերձավորները պետք է չուտ-չուտ լվանան իրենց ձեռքերը ջրով և սապոնով: հիվանդը պետք է գիմի բժիշկին:

բ) Քոս.—Անցնում է հիվանդից առողջին չիման միջոցով, իսկ քոսն առաջացնում է գենան կամ տիզը, վորը միջատ է, մտնում է հիվանդի մաշկի մեջ և առաջացնում հիվանդություն: Պետք է հիվանդներին բժշկել ծծմբի ոճանակով. բժշկության ժամանակ շարաթական մի քանի անգամ փոխել հիվանդի սպիտակեղենը և հագուստը. լվացվող շորերը լվանալ, իսկ չլվացվողն արեվին տալ: Հիվանդներին չպետք է դիպչել, հիվանդի հետ մի անկողնում չպառկել: հիվանդի շրջապատողները պետք է չուտ-չուտ լվացվեն ջրով և սապոնով:

գ) Մալտյան տեկո.— Դա մի հիվանդություն է, վոր

տեում է շարաթներ, ամիսներ և հալ ու մաշ է անում հիվանդին. շատ տարածված է անասնապահության շորջաններում և անցնում է մարդուն այժից և ուրիշ անասուններից. այդ հիվանդությունը նման է մալարիային-դողերոցքին, բայց խինինը (քինաքինան) ամենևին չի ոգնում: Յերբ ջերմը յերկար է տևում և խինինը չի ոգնում, պետք է կասկածել, վոր հիվանդն ունի մալտյան տեկո պետք է դիմել արոպկայան բժշկվելու համար: Իրանից պաշտպանվելու համար պետք է հում կաթ չբխել, պանիրը հում կաթից չպատրաստել, հիվանդ անասուն չմորթել և հիվանդ կենդանու միս չուտել:

դ) Բծավոր տիֆ.—Անցնում է հիվանդից առողջին վոջիների միջոցով: Հարկավոր է հետևել, վոր վոջիլ չբլինի վոչ վոքի վրա. վոջիլ չունենալու համար հարկավոր է չուտ-չուտ լողանալ, սպիտակեղենը փոխել, մագերը խուզել: Վոջիլներին կոտորելու համար պետք է գործածել սնդիկի ոճանակ (сер. ругиную мазь). ուրիշի սանրով չսանրվել. վոջրտին սանրելիս սանրը ամեն անգամ թաթախել յեռացրած քացախի մեջ, վոր սանրի վրայի անիծը ստակի: Վոչ բժիշկը չպետք է գնա այն տունը, վորտեղ տիֆով հիվանդ կա. վոջրտ շորերը չուտ-չուտ թափ տալ վառած թոնրի վրա:

յ) Կանխի (дизентерия) և վարավայնի տիֆ.—գրանցով վարակվում են հիվանդների կղկղանքից (կեղտոտությունից) հում ջրի և ճանձերի միջոցով: Իրանցից պաշտպանվելու համար հարկավոր է հիվանդների կղկղանքի վրա կրաջուց ածել ու հետո լցնել արտաքնոցը: Հիվանդների կղկղանքով կեղտոտված շորերը լավ յեռացնել ու հետո տալ լվանալու: Վոչ բժիշկը չպետք է գնա այն տունը, վորտեղ կա կանխով և վորովայնի տիֆով հիվանդ: Պաշտպանվելու համար առհասարակ հարկավոր է հում ջուր չգործածել, յեթե աղբյուր չկա այդ վայրում: Ջրամանները մաքուր պահել, կենսամթերքն-

ըր պաշտպանել ճանճերից. կոտորել ճանճերին կաշան  
թղթերով, մկնդեղի և ֆորմալինի լուծվածքով: Դրանք  
են հիվանդության թույնը հիվանդի կղկղանքից փոխան-  
ցում կենսամթերքների վրա և կեղտոտում նրանց: Ու-  
տելուց առաջ պետք է միշտ լվացվել. անվա ձեռքերով  
չուտել և չխմել:

**ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔ ՅԵՎ ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱՆՏԵՐ**

Բանվորա- գյուղացիական Հանրապետությունը  
միայն այն ժամանակ կարող է բարգավաճել, յերբ կու-  
նենա առողջ և աշխատունակ ազգաբնակչություն, ուս-  
տի յուրաքանչյուր բուրժուազացի պարտավոր է լուրջ մտա-  
ծել առողջ ժառանգներ թողնելու մասին:

Այս հարցում գլխավոր տեղը պատկանում է սեռա-  
կան կյանքին:

Պետք է հիշել, վոր վաղաժամ սկսած սեռական կյան-  
քը կործանիչ ազդեցություն է ունենում թե ժառանգ-  
ավոր գործարանների վրա և թե բնագանրապես ամբողջ  
կազմվածքի վրա:

Սեռական հասունությունը, արբունքի հասակը 14-  
16 տարիքն է յերկու սեռի համար, բայց դա չի նշանա-  
կում, վոր հենց այդ հասակից էլ կարելի չե սկսել սեռա-  
կան կյանքը:

Վոչ. այդ հասակը սեռական կյանքի համար վտղ է:  
Տղաների իսկական հասունության հասակը 24-25 տա-  
րին է, իսկ աղջիկներինը—20-22 տար. և այդ հասակից  
վաղ չպետք է ունենալ սեռական կյանք, յեթե ուզում են  
առողջ և աշխատունակ սերունդ ունենալ:

Այդ հասակից առաջ սեռական կյանքը վնասակար է:  
Սեռական թուժկայությունը վնասակար չե կազմ-  
վածքի համար, սեռական գործունեությունը շատ ուժ-  
ե խլում կազմվածքից, ուստի և անչափ ու անկարգ սե-  
ռական գործունեությունը թուլացնում և քայքայում է  
կազմվածքը: Սեռական հյուսթերը շատ կարևոր են կազ-

մվածքի համար և վնասակար է նրանց վատնումը, իսկ  
ընդհակառակը, նրանց հետ խնայողարար վարվելը  
պաշտպանում է կազմվածքն ու ժառանգությունից:

Սեռական անկարգ գործունեություն վանդավոր  
մի կողմն էլ վեներական ախտերով հիվանդանալն է:  
Վեներական ախտերը՝ սիֆիլիսն և սուսանակը վարակիչ  
են և մեծ չարիք հասարակություն համար. նրանք քայ-  
քայում են հիվանդի առողջությունը, կազմալուծում են  
բնտանիքը և վոչնչացնում սերունդը:


Վեներական ախտերը պահանջում են յերկար ու կա-  
նոնավոր բժշկություն. չբժշկված հիվանդությունը տա-  
րիներից հետո անգամ կարող է զարթնել և սոսկալի վնաս-  
ներ տալ: Յուրաքանչյուր հիվանդ պետք է ամեն գնով  
աշխատի բժշկվելը, իսկ առողջներն էլ ամեն կերպ պետք  
է աշխատեն չհիվանդանալ: Հիվանդությունը թաղցնող  
հիվանդը—վոճրածործ է, իսկ առողջը, վոր կանխարգե-  
լիչ միջոցներ գործ չի դնում չվարակվելու համար—պղեա-  
ն է և անգիտակից: Անձնական պաշտպանության համար՝  
չպետք է ունենալ սեռական հարաբերություն կասկածե-  
լի անձանց հետ և յուրաքանչյուր հարաբերությունից  
հետո լավ լվանալ սեռական գործարանները: Բայց ավե-  
լի լավ է՝ միշտ հիշել հետևյալ պատգամները՝

1. Յեղիբ թուժկալ մինչև ամուսնուժյունդ.
2. Յեղիբ մաքուր ամուսնուժյունիցդ հետո.
3. Յեղիբ պուշ վեներական ախտով վարակվելուց.
4. Յեղիբ գիտակից՝ բժշկվիր, յեթե հիվանդ ես և  
ուրիշներին մի վարակիր:

**ՃԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մշտական և կանոնավոր ձևով կատարվող վարժու-  
թյունները շատ առողջարար են, նրանք ամրացնում են  
մարդուն, դարձնում են նրան գիմնաստիկ, զարգացնում:

359/4-62



են ույժը և դարձնում են մարմինը ճկուն. բացի այդ նրանք դարձեցնում են մարդու միտքը, համարձակությունը և հնարագիտությունը:

Ֆիզիկական վարժություններն ուղղում են և հարթում արհեստի տված ֆիզիկական վնասումները:

Ֆիզիկական վարժությունների տեսակները՝ զրոտանք, շարժուն խաղեր, մարմնամարզություն բաց ուղի մեջ, նույնպես և սպորտ-թիմավարություն, լող տալ, պաղի տալ վոտի սահնակներով (КОНЬКИ) կամ ձյան քոչերով (ЛЫЖИ) հեծանիվ նստել և այլն: Ֆիզիկական աշխատանքը դաշտում, պարտիզում, բանջարանոցում նույնպես ոգտակար են:

Չպետք է մոռանալ, վոր ֆիզիկական վարժությունները բոլորի համար ել միատեսակ ոգտակար չեն:

Յուրաքանչյուր հասակ իրեն համապատասխան վարժությունն ունի, նախ քան պարապելը պետք է դիմել բժշկին, վոր քննի և իմանա արդյոք քննվողի սիրտը, յերիկամուներեն ու թոքերն առողջ են, կարող ե արդյոք քննվողը ֆիզիկական վարժություններ կատարել և յեթե կարող ե, վոր տեսակ վարժությունը կարելի յե թույլ տալ:

Պետք է հիշել, վոր անկանոն վարժություններն ուղուտի փոխարեն վնաս կարող են տալ, ուստի անհրաժեշտ ե, վոր ֆիզիկական վարժությունները բժշկի խորհրդով լինեն:

Պետք է հիշել հեռեյալ կանոնները.

Վարժությունները կատարել բացողյա և վոչ փակված ու փոշտ սենյակում. հենց հոգնեցիր, չպետք ե շարունակել, այլ պետք ե հանգստանալ. տուրնիկի վրա չպետք ե վարժություններ անել. վոչ չափահասները չպետք ե անեն ուժեղ վարժություններ:

Լողանալիս, ափից չպետք ե հեռու գնալ. մանավանդ ուժեղ հոսանքի տեղերում: Յեթե գետի կամ լճի

խորությունը և հատակը հայտնի չե, չթռչել ջրի մեջ. յերկար չմնալ ջրի մեջ. հենց վոր դողաս, դուրս յեկ ջրից. ջրի մեջ չկանգնել, այլ շարժումներ դործել. լողանալուց հետո պետք ե արագ քայլել, յեթե մրսում ես:

Վոտի սահնակով կամ ձյան քոչերով պաղի տալիս՝ քամուն հակառակ չգնալ, քրտնած ժամանակը զգույշ լինել քամուց: Հեծանիվ նստելիս՝ քամուն հակառակ չքրչել, գառիվեր բարձրանալիս՝ իջիր հեծանիվից, յեթե չնշարեգլություն ունես: Բարձր գառիվերը վոտով բարձրացիր և վոչ հեծանիվով. կառքերի հետևից չքրչել, մանավանդ քամուն հակառակ:

Ֆիզիկական վարժությունների ժամանակ պետք ե աշխատել, վոր դրպանում չլինեն դանակ և այլ կոշտ կամ կտրուղ առարկաներ:

ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հատակին և գետնին քֆելը. — խորտի և թքի մեջ հաճախ գտնվում ե թոքախտի վարակիչ թույնը:

2. Հազալիս և փոշտալիս, պետք ե մի կողմը շուտալ յերեսը, վոր ուրիշի վրա, կամ կենսամթերքների վրա չնկնեն թքի կաթիլները:

3. Տուն մտնելիս պետք ե վոտները մաքրել, վորովհետե կեղտոտված կոշիկների վրա կարող ե լինել ամեն տեսակ վարակիչ հիվանդությունների թույն, վորը խառնվելու յե սենյակի փոշու հետ և վարակելու սենյակի ոգը:

4. Շատերը դիրքը կամ տետրակը թերթելիս՝ քֆոտում են մատները, ձեռքը բերանը տանելով. նույնն անում են և թղթադրամ համրելիս. թերթիկներին և թղթադրամներին կարող ե կպած լինել մի վորեւ հիվանդության թույն և մատը բերանը դնելիս կարելի յե վարակվել:


5. Վնասակար ե յեղունգների կրծելը, յերեսի պը-  
ղակների ճմլելը, մատներով քթի մաքրելը և այլն: Յե-  
ղունկների տակ միշտ կեղտ կա: Կրծելիս կեղտը կուլ կը  
գնա: պղուկների ճմլելուց կամ մատներով քթի մաքրե-  
լուց կարելի յե վարակվել կարմիր քամով և այլն:

6. Վատ սովորութիւնն ե և վնասակար ուրիշի սան-  
քով սանրվելը, ուրիշի գդալով ուտելը և ուրիշի բաժա-  
կով խմելը:

7. Նույնպէս վատ սովորութիւնն ե և վնասակար քա-  
շը մատներով և մի ընդհանուր ամանից ուտելը: Ճաշը  
պետք ե ուտել զգալով, ճաշի ժամանակ պետք ե գործա-  
ծել դանակ և պատառաքաղ և ամեն մարդ պետք ե ունե-  
նա իր պնակն ու գդալը:

8. Վնասակար ե ուրիշի գլանակ կամ ծխամորճ (չի-  
բուխ) ծխելը՝ կարելի յե վարակվել սիֆիլիսով:

ՎԵՐՋ



9497

ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.

1  
2

«Ազգային գրադարան»



NL0271153

1950